ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

Համարը	N 1492-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2015.12.23/88(1177) Հոդ.1139	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	17.12.2015
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	21.12.2015
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	02.01.2016	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԷՆԵՐԳԱՍՊԱՌՈՂ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔՎԱԾՔՆԵՐԻ ՊԻՏԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԻՏԱԿԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 դեկտեմբերի 2015 թվականի N 1492-Ն

ԷՆԵՐԳԱՍՊԱՌՈՂ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔՎԱԾՔՆԵՐԻ ՊԻՏԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԻՏԱԿԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի պահանջների կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել էներգասպառող սարքերի և սարքվածքների պիտակավորման կարգը և պիտակի ձևը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Հ. Աբրահամյան

2015 թ. դեկտեմբերի 21
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
դեկտեմբերի 17-ի N 1492-Ն որոշման

ԷՆԵՐԳԱՍՊԱՌՈՂ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔՎԱԾՔՆԵՐԻ ՊԻՏԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԻՏԱԿԻ ՁԵՎԸ

1. Սույն կարգը տարածվում է հետևյալ էներգասպառող սարքերի և սարքվածքների՝ կենցաղային գազի ջրատաքացուցիչ կաթսաների, կենցաղային գազի վառարանների (կոնվեկտորներ), կենցաղային էլեկտրական սառնարանների ու սառցարանների, օդորակիչների և լվացքի մեքենաների վրա:

2. Նշված կենցաղային էներգասպառող սարքերի և սարքվածքների էներգետիկ բնութագրերի փորձարկումները կարող են իրականացվել փորձարկման լաբորատորիաների կողմից՝ հայտատուի (ներկրող կամ արտադրող տնտեսավարող սուբյեկտներ) հաշվին՝ Հայաստանի Հանրապետությունում գործող միջազգային և տարածաշրջանային ստանդարտներին ներդաշնակեցված ազգային ստանդարտների համաձայն՝

1) կենցաղային գազի սարքավորումներ՝

ա. գազային վառելիքով կենտրոնական ջեռուցման կաթսաներ. C տիպի, 70 կՎտ-ից ոչ ավելի ջերմային անվանական բեռնվածքով ջեռուցիչ կաթսաներ,

բ. գազի վառարանների էներգասպառման չափման միջոցներ.

2) կենցաղային էլեկտրական սարքավորումներ և սարքվածքներ՝

ա. էլեկտրական կենցաղային լվացքի մեքենաներ: Աշխատանքային բնութագրերի չափման միջոցներ,

բ. էլեկտրասնուցման ցանցից աշխատող կենցաղային սառնարաններ, սառցարաններ, ցածր ջերմաստիճանային պահարաններ և դրանց զուգակցումներ. էլեկտրական էներգիայի սպառման և համապատասխան բնութագրերի չափման միջոցներ,

գ. էլեկտրաշարժաբերով ճնշակներով օդորակիչներ, հեղուկի ագրեգատացված պաղեցումով սարքեր, ջերմապոմպեր կենցաղային ջեռուցման և պաղեցման համար սերիայի ստանդարտներ:

3. Հայաստանի Հանրապետության համար սահմանվում են էներգասպառող սարքերի էներգաարդյունավետության պիտակների նշված ձևերը, դրանց վրա ներկայացվող համապատասխան տեղեկատվությամբ՝

1) կենցաղային էլեկտրական լվացքի մեքենաներ: Էներգաարդյունավետության պիտակի չափերը՝ ուղղանկյուն, 116x259 մմ: Պիտակի վրա ներկայացվում են՝

ա. արտադրող ընկերության անվանումը, ապրանքանշանը և սարքավորման մոդելը,

բ. սարքավորման էներգաարդյունավետության դասը A-G սանդղակին համապատասխան (A՝ առավել արդյունավետ, G՝ առավել ոչ արդյունավետ): Լվացքի մեքենաների էներգաարդյունավետության դասը սահմանվում է ըստ բամբակյա իրերի լվացքի մեկ ցիկլի (60^0C) ընթացքում առավելագույն բեռնվածքի պարագայում (սովորաբար 6 կգ) ծախսված էլեկտրական էներգիայի քանակի (կՎտժ): Էներգաարդյունավետությունն արտահայտվում է կՎտժ/կգ լվացք ցուցանիշով՝

A	B	C	E	F	G
<0.19	<0.23	<0.27	<0.31	<0.35	<0.39

գ. լվացքի մեկ ցիկլի էլեկտրական էներգիայի ծախսը (բամբակյա իրեր 60^0C)՝ համաձայն համապատասխան ստանդարտում ներկայացված փորձարկումների ընթացակարգի,

դ. լվացքի արդյունավետությունը A-G սանդղակին համապատասխան (A՝ բարձր, G՝ ցածր),

ե. չորացման արդյունավետության դասը A-G սանդղակին համապատասխան (A՝ բարձր, G՝ ցածր),

զ. պտտման առավելագույն արագությունը բամբակյա իրերի լվացքի (60^0C ցիկլի դեպքում՝ համաձայն համապատասխան ստանդարտում ներկայացված փորձարկումների ընթացակարգի,

է. սարքավորման տարողությունը բամբակյա իրերի լվացքի (60^0C) ցիկլի դեպքում արտահայտված կգ-ով,

ը. լվացքի մեկ ցիկլի (բամբակյա իրեր 60^0C ջրի ծախսն արտահայտված լ-ով,

թ. լվացքի և չորացման գործողությունների ժամանակ աղմուկի մակարդակն արտահայտված դԲԱ 1 պՎտ-ի հաշվով:

Կենցաղային էլեկտրական լվացքի մեքենաների համար սահմանված էներգաարդյունավետության պիտակի ձևը նշված է սույն կարգի N 1 ձևում.

2) կենցաղային էլեկտրական օդորակիչներ. էներգաարդյունավետության պիտակի չափերը՝ ուղղանկյուն՝ 116x269 մմ: Պիտակի վրա ներկայացվում են՝

ա. արտադրող ընկերության անվանումը, ապրանքանշանը և սարքավորման մոդելը: «Սպլիտ» և «Մուլտի սպլիտ» տիպի սարքերի համար նշվում են ներսի և դրսի բլոկների մոդելները,

բ. սարքավորման էներգաարդյունավետության դասը A-G սանդղակին համապատասխան, A՝ առավել արդյունավետ, G՝ առավել ոչ արդյունավետ): Օդորակիչների էներգաարդյունավետության դասը սահմանվում է ըստ էներգաարդյունավետության գործակիցների հաշվարկային տիրույթների: Էներգաարդյունավետության գործակիցները հաշվարկվում են որպես սարքավորման սառեցնող ունակության և էլեկտրական հզորության հարաբերություն: Ընդ որում, էներգաարդյունավետության գործակիցների հաշվարկային տիրույթները տարբեր տիպի (առանձնացված բլոկներով սարքեր, համակցված սարքեր և այլն) օդորակիչների համար տարբեր են,

գ. էլեկտրական էներգիայի տարեկան հաշվարկային ծախսը, որը հաշվարկվում է որպես սարքավորման դրվածքային հզորության և տարվա ընթացքում սարքավորման շահագործման ժամաքանակի (500 ժամ) արտադրյալ՝ կՎտժ:

Պաղեցնող ռեժիմում սարքավորման դրվածքային հզորությունը՝ կՎտ: Պաղեցնող ռեժիմում և դրվածքային հզորությամբ աշխատելու դեպքում սարքավորման էներգաարդյունավետության գործակիցը (որքան բարձր է ցուցանիշը, այդքան արդյունավետ են սարքավորման էներգետիկ բնութագրերը պաղեցնող ռեժիմում),

դ. սարքավորման տիպը՝ պաղեցնող կամ պաղեցնող/ջեռուցող,

ե. ջեռուցման դրվածքային հզորությունը (ջեռուցման հնարավորությամբ սարքերի համար),

զ. ջեռուցման էներգաարդյունավետությունը (ջեռուցման հնարավորությամբ սարքերի համար, A-G սանդղակին համապատասխան, A՝ առավել արդյունավետ, G՝ առավել ոչ արդյունավետ),

է. սարքավորման աղմուկի մակարդակն արտահայտված դԲԱ 1 պՎտ-ի հաշվով: Օդորակիչի համար սահմանված էներգաարդյունավետության պիտակի ձևը նշված է սույն կարգի N 2 ձևում.

3) կենցաղային էլեկտրական սառնարաններ, սառցարաններ և դրանց համակցումը հանդիսացող սարքեր: Էներգաարդյունավետության պիտակի չափերը՝ ուղղանկյուն՝ 116 x 220 մմ: Պիտակի վրա ներկայացվում են՝

ա. արտադրող ընկերության անվանումը, ապրանքանշանը և սարքավորման մոդելը,

բ. սարքավորման էներգաարդյունավետության դասը A-G սանդղակին համապատասխան (A՝ առավել արդյունավետ, G՝ առավել ոչ արդյունավետ): Սառնարանների էներգաարդյունավետության դասը որոշվում է ըստ էներգաարդյունավետության ինդեքսի արժեքի: Էներգաարդյունավետության ինդեքսն իր հերթին հաշվարկվում է որպես սարքավորման տարեկան էներգասպառման և տվյալ տիպի սարքավորման տարեկան ստանդարտ էներգասպառման հարաբերություն: Էլեկտրական էներգիայի տարեկան ծախսը՝ կՎտժ, թարմ սննդամթերքի պահպանման համար նախատեսված սառցախցերի ընդհանուր ծավալը, լ (որտեղ ջերմաստիճանը բարձր է -6^{0}C),

գ. սառցարանային խցերի ընդհանուր ծավալը, լ (որտեղ ջերմաստիճանը ցածր է -6^{0}C),

դ. սառցարանային խցերի աստղային ռեյթինգը ըստ համապատասխան ստանդարտի պահանջների,

ե. սարքավորման աղմուկի մակարդակն արտահայտված դԲԱ 1 պՎտ-ի հաշվով:

Կենցաղային էլեկտրական սառնարանների, սառցարանների և դրանց համակցումը հանդիսացող սարքերի համար սահմանված էներգաարդյունավետության պիտակի ձևը նշված է սույն կարգի N 3 ձևում.

4) կենցաղային գազի ջրատաքացուցիչ կաթսաներ՝

Կենցաղային գազի կաթսաների էներգաարդյունավետության պիտակի չափերը՝ շրջան, 50 մմ շառավղով: Պիտակի վրա ներկայացվում են՝

ա. արտադրող ընկերության անվանումը, ապրանքանշանը և սարքավորման մոդելը,

բ. սարքավորման էներգաարդյունավետության դասը, որը բնութագրվում է «աստղային» ռեյթինգով (4 աստղ՝ առավել արդյունավետ, 1 աստղ՝ առավել ոչ արդյունավետ):

Կենցաղային գազի ջրատաքացուցիչ կաթսաների էներգաարդյունավետության դասը սահմանվում է ըստ սարքավորումների անվանական ջերմարտադրողականության դեպքում սարքավորման ՕԳԳ-ի արժեքների որոշակի տիրույթների: Սահմանված են հետևյալ տիրույթները՝

Էներգաարդյունավետության դասը	Անվանական հզորության դեպքում՝ ՕԳԳ, %
*	81-86
**	87-90
***	91-94
****	95-ից բարձր

Կենցաղային գազի ջրատաքացուցիչ կաթսայի էներգաարդյունավետության պիտակի ձևը նշված է սույն կարգի N 4 ձևում.

5) կենցաղային գազի վառարաններ (կոնվեկտորներ): Կենցաղային գազի վառարանների էներգաարդյունավետության պիտակի չափերը՝ շրջան, 50 մմ շառավղով: Պիտակի վրա ներկայացվում են՝

ա. արտադրող ընկերության անվանումը, ապրանքանշանը և սարքավորման մոդելը,

բ. սարքավորման էներգաարդյունավետության դասը, որը բնութագրվում է «աստղային» ռեյթինգով (4 աստղ՝ առավել արդյունավետ, 1 աստղ՝ առավել ոչ արդյունավետ):

Կենցաղային գազի վառարանների էներգաարդյունավետության դասը սահմանվում է ըստ սարքավորումների անվանական ջերմարտադրողականության դեպքում սարքավորման ՕԳԳ-ի արժեքների որոշակի տիրույթների: Սահմանված են հետևյալ տիրույթները՝

Էներգաարդյունավետության դասը	Անվանական հզորության դեպքում՝ ՕԳԳ, %
*	80-84
**	85-88
***	89-91
****	91-ից բարձր

Կենցաղային գազի վառարանի էներգաարդյունավետության պիտակի ձևը նշված է սույն կարգի N 5 ձևում.

6) պիտակները փակցվում են սույն կարգի 3-րդ կետով նախատեսված յուրաքանչյուր ապրանքատեսակի արտաքին մակերեսին՝ սպառողի համար տեսանելի տեղում:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Դ. Հարությունյան

Ձև N 1



Էներգիա	Լվացքի մեքենա
Արտադրող Մոդել	ապրանքանշան ABC 123
Ավելի արդյունավետ A B C D E F G Պակաս արդյունավետ	B
Էներգիայի ծախսը, կՎտժ/ցիկլ (ըստ շամբակա իրերի 60°C-ում լվացքի ցիկլի ստանդարտ փորձարկման արդյունքների) Էլեկտրական էներգիայի փաստացի ծախսը կախված կլինի սարքի աշխատանքային օժտիմից	X.YZ
Լվացքի արդյունավետությունը A: բարձր G: ցածր	A B C D E F G
Չորացման արդյունավետությունը A: բարձր G: ցածր	A B C D E F G
Պտտման արագությունը (պտ/րոպե)	1100
Տարողությունը (ըստ բամբակի) կգ	Y.Z
Ջրի ծախսը լ	YX
Աղմուկը Լվացում (դԲԱ 1 պՎտ-ի հաշվով) Չորացում	XY xyz

Մանրամասն տեղեկությունները բերված են սարքի տեղեկատվական գրքույկում

Ըստ ՀՍՏ ԵՆ 60456 ստանդարտի պահանջների ՀՀ կառավարության որոշում թիվ _____

Հավ N 2



Օդորակիչի պիտակ

Հավելված N 3



Սառնարանի/սառցարանի պիտակ

Հավ N 4

Կենցաղային գազի ջրատաքացուցիչ կաթսայի պիտակ

Հավելված N 5

Կենցաղային գազի վառարանի պիտակ